

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԷՎՈՎԱԲԱՆԿ» ՓԲԸ հիմնադիրների ժողովի
15.05.1990թ. որոշմամբ (արձանագրություն թիվ 1)

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

Փոփոխված է
«ԷՎՈՎԱԲԱՆԿ» ՓԲԸ Բաժնետերերի արտահերթ
ընդհանուր ժողովի 12.03.2022թ. որոշմամբ
(արձանագրություն թիվ 1)

Խորհրդի նախագահ՝
Վազգեն Գևորգյան

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝
(ստորագրություն)



«ԷՎՈՎԱԲԱՆԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(Նոր խմբագրություն)

evocaBANK


Հաստատված է՝

Հիմնադիրների ժողովի կողմից 15.05.1990թ. արձանագրություն թիվ 1

Փոփոխված է՝

1. Հիմնադիրների ժողովի կողմից 10.09.1993թ. արձանագրություն թիվ 4
2. Հիմնադիրների ժողովի կողմից 04.11.1994թ. արձանագրություն թիվ 04/94
3. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 06.02.1996թ. արձանագրություն թիվ 02բ/96
4. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 25.11.1996թ. արձանագրություն թիվ 03/96
5. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 20.02.1997թ. արձանագրություն թիվ 02/97
6. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 27.06.1997թ. արձանագրություն թիվ 03/97
7. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 24.10.1997թ. արձանագրություն թիվ 04/97
8. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 15.01.1999թ. արձանագրություն թիվ 01/99
9. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 24.08.1999թ. արձանագրություն թիվ 03
10. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 18.01.2000թ. արձանագրություն թիվ 01/2000
11. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 22.01.2000թ. արձանագրություն թիվ 01/2000
12. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 21.06.2001թ. արձանագրություն թիվ 02/2001
13. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 06.08.2001թ. արձանագրություն թիվ 03/2001
14. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 03.09.2001թ. արձանագրություն թիվ 04/2001
15. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 25.03.2002թ. արձանագրություն թիվ 01/2002
16. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 27.04.2004թ. արձանագրություն թիվ 02
17. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 12.11.2004թ. արձանագրություն թիվ 04/2004
18. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 02.04.2005թ. արձանագրություն թիվ 01
19. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 15.06.2005թ. արձանագրություն թիվ 02
20. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 23.09.2005թ. արձանագրություն թիվ 03
21. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 23.08.2006թ. արձանագրություն թիվ 02
22. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 16.05.2007թ. արձանագրություն թիվ 01
23. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 21.12.2007թ. արձանագրություն թիվ 03
24. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 16.05.2008թ. արձանագրություն թիվ 01
25. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 24.09.2010թ. արձանագրություն թիվ 02
26. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 03.02.2011թ. արձանագրություն թիվ 01
27. Մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 24.02.2011թ. արձանագրություն թիվ 02
28. Մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի կողմից 08.07.2016թ. արձանագրություն թիվ 2
29. Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից 07.10.2016թ. արձանագրություն թիվ 3
30. Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից 29.09.2017թ. արձանագրություն թիվ 2
31. Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 30.05.2019թ. արձանագրություն թիվ 1
32. Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 29.05.2020թ. արձանագրություն թիվ 1
33. Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից 12.03.2022թ. արձանագրություն թիվ 1

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. «ԷՎՈԿԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ Բանկ) հիմնադրվել է 1990թ. հունիսի 1-ին՝ Բանկի հիմնադիրների կողմից կնքված հիմնադիր պայմանագրով՝ «Պրոմեթևս առևտրային բանկ» անվամբ:
- «Պրոմեթևս առևտրային բանկ» ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի 03.09.2001թ. թիվ 04/2001 արձանագրությամբ «Պրոմեթևս առևտրային բանկ»-ը վերանվանվել է «Պրոմեթեյ Բանկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության:
- «Պրոմեթեյ Բանկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների 08.07.2016թ. արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ (արձանագրություն թիվ 2) «Պրոմեթեյ Բանկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը վերակազմավորվել է «Պրոմեթեյ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության:
- «Պրոմեթեյ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի 29.09.2017թ. որոշմամբ (արձանագրություն թիվ 2) «Պրոմեթեյ Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը վերանվանվել է «ԷՎՈԿԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության, որը հանդիսանում է «Պրոմեթեյ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության լիիրավ իրավահաջորդը:
- 1.2. Բանկի ֆիրմային անվանումն է՝
Լրիվ՝
- հայերեն՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
 - անգլերեն՝ «EVOCABANK» Closed Joint Stock Company
 - ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество «ЭВОКАБАНК»
- Կրճատ՝
- հայերեն՝ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
 - անգլերեն՝ «EVOCABANK» CJSC
 - ռուսերեն՝ ЗАО «ЭВОКАБАНК»
- 1.3. Բանկի ապրանքային նշանն է՝ 
- 1.4. Բանկի գտնվելու վայրն (իրավաբանական հասցեն) է՝
Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության փողոց 44/2:
- 1.5. Բանկն ունի իր ֆիրմային անվանման և ապրանքային նշանի օգտագործման բացառիկ իրավունք:
- 1.6. Բանկն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքներով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) իրավական ակտերով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:
- 1.7. Բանկը ձեռք է բերել իրավաբանական անձի կարգավիճակ (02.10.1991թ., գրանցման վկայական թիվ 0157), ունի մասնաճյուղեր և կառուցվածքային ստորաբաժանումներ:
- 1.8. Բանկային գործունեությունը Բանկն իրականացնում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 02.10.1991թ. տրամադրված թիվ 27 բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա:
- 1.9. Բանկի նպատակն է բանկային, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն իրականացնելու միջոցով շահույթի ստացումը:
- 1.10. Բանկի բաժնետերեր կարող են լինել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձիք՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 1.11. Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:
- 1.12. Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար:
- 1.13. Բանկի բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Բանկի պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմանում կրում են Բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկերը:
- 1.14. Բանկային, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն իրականացնելու նպատակով Բանկը կարող է ձեռք բերել քաղաքացիական իրավունքներ, կրել քաղաքացիական պարտականություններ, դատարաններում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
- 1.15. Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, գրանցումը և լուծարումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:
- 1.16. Բանկն ինքնուրույն է իրականացնում իր գույքի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը:
- 1.17. Բանկը երաշխավորում է իր հաճախորդներին բանկային, առևտրային և ցանկացած այլ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը՝ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով:

- 1.18. Բանկի ֆիզիկական անձ հաճախորդների ավանդների վերադարձը երաշխավորվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 1.19. Բանկի հաճախորդների բանկային ավանդները և Բանկին ի պահ հանձնված դրամական միջոցները և այլ գույքը կարող է բռնագրավվել, դրանց վրա կալանք, արգելանք դրվել, առգրավվել կամ բռնագանձվել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:
- 1.20. Բանկը պատասխանատվություն չի կրում պետական իրավասու մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով հաճախորդների հաշիվների կամ գույքի արգելադրման, առգրավվման, բռնագանձման կամ բռնագանձում տարածելու հետևանքով, ինչպես նաև դրա հետ կապված հաճախորդների կրած վնասների համար:
- 1.21. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Բանկի պարտավորությունների համար: Բանկն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:
- 1.22. ՀՀ Կենտրոնական բանկը և Բանկը պատասխանատու չեն միմյանց պարտավորությունների համար, եթե նրանք այդպիսիք չեն ստանձնել:
- 1.23. Բանկն իրավունք ունի մասնակցել իրավաբանական անձանց միությունների ստեղծմանը և մասնակցել դրանց:
- 1.24. Բանկն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով թողարկել արժեթղթեր:
- 1.25. Բանկի կառավարման մարմիններն են՝ բաժնետերերի ընդհանուր ժողովը, խորհուրդը, վարչությունը և վարչության նախագահը:
- 1.26. Բանկի գործադիր մարմին է հաղիսանում Բանկի վարչության նախագահը և վարչությունը:
- 1.27. Բանկի կառավարման մարմինների կազմավորման և գործունեության կարգը, իրավասությունների շրջանակը սահմանվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով և սույն կանոնադրությամբ:

2. Ֆինանսական և այլ գործառնություններ

- 2.1. Բանկը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները.
 - 2.1.1. ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ,
 - 2.1.2. տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,
 - 2.1.3. տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ),
 - 2.1.4. բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ,
 - 2.1.5. մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները.
 - 2.1.6. թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, նման այլ գործառնություններ կատարել,
 - 2.1.7. իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն,
 - 2.1.8. մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում),
 - 2.1.9. գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ,
 - 2.1.10. գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,
 - 2.1.11. իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),
 - 2.1.12. ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,
 - 2.1.13. մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,
 - 2.1.14. ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,
 - 2.1.15. իրացնել ապահովագրական վկայագրեր և (կամ) պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ,
 - 2.1.16. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով իրականացնել պետական բյուջեի դրամարկղային սպասարկման գործառնություններ,
- 2.2. Սույն կանոնադրության 2.1. կետում նշված գործառնությունները Բանկը կարող է իրականացնել ՀՀ դրամով, արտարժույթով, ինչպես նաև համաշխարհային պրակտիկայում ընդունված այլ վճարամիջոցներով՝ պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները:

- 2.3. Բանկն իրավունք ունի իրականացնել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ գործառնություններ կամ ՀՀ Կենտրոնական բանկի թույլտվությամբ այնպիսի գործառնություններ, որոնք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության կամ սույն կանոնադրության 2.1. կետում նշված գործառնությունների հետ և չեն վտանգում Բանկի ավանդատուների շահերը:

3. Բանկի կանոնադրական հիմնադրամը (կանոնադրական կապիտալը)

- 3.1. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը կազմում է 23,000,000,000 (քսան երեք միլիարդ) ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 172 500 (մեկ հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր) հատ թողարկված և տեղաբաշխված հասարակ բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով և 57 500 (հիսունյոթ հազար հիզ հարյուր) հատ թողարկված և տեղաբաշխված արտոնյալ տեսակի բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով), ընդ որում՝ արտոնյալ տեսակի բաժնետոմսերը բաժանված են 35 500 (երեսունհինգ հազար հինգ հարյուր) հատ 07.10.2016թ. թողարկման, 14 500 (տասնչորս հազար հինգ հարյուր) հատ 29.05.2020թ. թողարկման և 7 500 (յոթ հազար հինգ հարյուր) հատ 12.03.2022թ. թողարկման արտոնյալ տեսակի բաժնետոմսերի:
- 3.2. Բանկի կանոնադրական կապիտալն ամբողջությամբ համալրված է ՀՀ դրամով:
- 3.3. Բանկի կանոնադրական հիմնադրամի մեծացումն իրականացվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 3.4. Կանոնադրական հիմնադրամը կարող է ավելացվել Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով:
- 3.5. Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազեցում թույլատրվում է միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

4. Բանկի բաժնետոմսերը և այլ արժեթղթերը

- 4.1. Կանոնադրական հիմնադրամի համալրման նպատակով Բանկն իրավունք ունի թողարկել սովորական և արտոնյալ բաժնետոմսեր, որոնք կարող են տեղաբաշխվել միայն բաժնետերերի և նախօրոք որոշված այլ անձանց միջև:
- 4.2. Բանկն իրավունք չունի կատարել բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխում՝ բաց բաժանորդագրության միջոցով կամ այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք անսահմանափակ թվով անձանց:
- 4.3. Տնտեսական գործունեությամբ առաջացած վնասները ծածկելու նպատակով Բանկի կողմից բաժնետոմսերի թողարկումը և տեղաբաշխումը արգելվում է:
- 4.4. Բանկի բոլոր բաժնետոմսերն անվանական են: Բաժնետոմսն անբաժանելի է: Բաժնետոմսերը վճարելու պարտականությունից բաժնետիրոջն ազատել՝ ներառյալ Բանկի նկատմամբ պահանջների հաշվանցումով, չի թույլատրվում:
- 4.5. Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:
- 4.6. Բանկի բաժնետերերի ռեեստրը վարում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Դեպոզիտարիան:
- 4.7. Բանկը բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է համախմբել (կոնսոլիդացնել) տեղաբաշխված բաժնետոմսերը՝ մեծացնելով անվանական արժեքը կամ բաժանելով ավելի փոքր անվանական արժեքով բաժնետոմսերի:
- 4.8. Այն դեպքում, երբ միևնույն բաժնետոմսը պատկանում է մի քանի անձանց, ապա նրանք բոլորը Բանկի նկատմամբ համարվում են մեկ բաժնետեր և կարող են իրենց իրավունքներն իրականացնել որևէ մեկի կամ ընդհանուր ներկայացուցչի միջոցով:
- 4.9. Հասարակ անվանական բաժնետոմսի ձևը սահմանված է ոչ փաստաթղթային:
- 4.10. Մեկ հասարակ անվանական բաժնետոմսը բաժնետիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք: Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել նրանց պատկանող սովորական բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք: Սովորական բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումը Բանկի կողմից չի երաշխավորվում:
- 4.11. Բանկի թողարկած արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի նրա կանոնադրական կապիտալի 25 (քսանհինգ) տոկոսը:
- 4.12. Արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժնի չափը, լուծարային արժեքը (դրանց որոշման կարգը) և այլ սահմանումները ամրագրված են 07.10.2016թ., 29.05.2020թ. և 12.03.2022թ. արտոնյալ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմաններով, ինչպես նաև Բանկի կողմից կնքված

արտոնյալ բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագրերով (պայմանները ենթակա են փոփոխման և հաստատման Բանկի խորհրդի կողմից):

- 4.13. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը բաժնետերերի ընդհանուր ժողովում չունեն ձայնի իրավունք, բացառությամբ Բանկի վերակազմավորման կամ լուծարման հարցերի:
- 4.14. Բանկի որոշակի դասի արտոնյալ բաժնետոմսերն իրենց սեփականատեր բաժնետերերին տրամադրում են միննույն իրավունքները:
- 4.15. Արտոնյալ բաժնետոմսերը հասարակ (սովորական) բաժնետոմսերով փոխարկելիս Բանկը պետք է մարի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ բոլոր պարտքերը կամ նրանց համաձայնությամբ պարտավորվի վճարել պարտքերն այլ ձևով:
- 4.16. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն օգտվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով սահմանված իրավունքներից և կրում նույն հոդվածով սահմանված պարտականություններ:
- 4.17. Բանկն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով թողարկել և տեղաբաշխել պարտատոմսեր, մուրհակներ, ավանդային սերտիֆիկատներ և այլ արժեթղթեր:

5. Բանկի բաժնետերերի իրավունքները և պարտականությունները

- 5.1. Բանկի կանոնադրական հիմնադրամի ձևավորմանը կարող են մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք:
 - 5.2. Բանկի սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի՝
 - 5.2.1. մասնակցել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
 - 5.2.2. մասնակցել Բանկի կառավարմանը,
 - 5.2.3. ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից,
 - 5.2.4. ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված ցանկացած տեղեկատվություն,
 - 5.2.5. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձանց,
 - 5.2.6. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովում հանդես գալ առաջարկություններով,
 - 5.2.7. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
 - 5.2.8. հայցով դիմել դատարան՝ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքների ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
 - 5.2.9. Բանկի լուծարման դեպքում ստանալ գույքի իր հասանելիք մասը,
 - 5.2.10. ձեռք բերել իրեն պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունք, եթե՝
 - 5.2.10.1. որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և տվյալ բաժնետերը քվեարկել է Բանկի վերակազմակերպման, բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել,
 - 5.2.10.2. կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել է նշված բաժնետիրոջ իրավունքները և նա դեմ է քվեարկել կամ չի մասնակցել այդ հարցի քվեարկությանը,
 - 5.2.11. օգտվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:
- 5.3. Բանկի արտոնյալ բաժնետոմս ունեցող բաժնետերերն իրավունք ունեն՝
 - 5.3.1. մասնակցել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ առանց ձայնի իրավունքի,
 - 5.3.2. ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված չափով և կարգով,
 - 5.3.3. ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված ցանկացած տեղեկատվություն,
 - 5.3.4. Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի իր հասանելիք մասը:
- 5.4. Բանկի բաժնետերերը պարտավոր են՝
 - 5.4.1. ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Բանկի գույքի ձևավորմանը,
 - 5.4.2. չիրականացնել այնպիսի գործողություններ, որոնք նախապես միտված են եղել Բանկին վնասների պատճառմանը,

- 5.4.3. չիրականացնել գործողություններ, որոնք կարող են խաթարել սույն կանոնադրությամբ սահմանված Բանկի նպատակների իրագործումը,
- 5.4.4. մասնակցել այնպիսի կառավարչական որոշումների կայացմանը, առանց որոնց Բանկը չի կարող ապահովել ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր բնականոն գործունեությունը, եթե նման որոշումների կայացման համար նրանց մասնակցությունը պարտադիր է,
- 5.4.5. կրել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

6. Բանկի շահույթը, պահուստային հիմնադրամը և շահաբաժինները

- 6.1. Օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր մյուս վճարումները կատարելուց հետո ձևավորված շահույթը Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ ուղղվում է
 - 6.1.1. շահութաբաժինների վճարմանը,
 - 6.1.2. սույն կանոնադրությամբ սահմանված պահուստային հիմնադրամի և այլ հիմնադրամների համալրմանը,
- 6.2. Շահաբաժինների վճարմանը կամ պահուստային հիմնադրամի համալրմանը չուղղված շահույթը, որպես չբաշխված շահույթ, մնում է Բանկի տիրապետության տակ:
- 6.3. Բանկը կարող է շահութաբաժիններ վճարել եռամսյակային, կիսամսյակային և տարեկան արդյունքներով:
- 6.4. Շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումն ընդունում է բաժնետերերի ընդհանուր ժողովը, որով սահմանվում են վճարման չափը և ժամկետները: Շահութաբաժինների վճարումը կատարվում է համաձայն Բանկի խորհրդի հաստատած կարգի:
- 6.5. Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե դրանք բաշխելու պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են այդ պահին Բանկում առկա չբաշխված գուտ շահույթի գումարին կամ գերազանցում են այն:
- 6.6. Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ կանոնադրական հիմնադրամի 15 (տասնհինգ) % -ի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է ավելի փոքր մեծություն, հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթի առնվազն 5 (հինգ) %-ի չափով, ինչպես նաև Բանկի նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:
- 6.7. Պահուստային հիմնադրամի համալրումն ու օգտագործումը իրականացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Բաժնետերերի ընդհանուր ժողովը

- 7.1. Բանկի կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է:
- 7.2. Բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններն են՝
 - 7.2.1. Բանկի Կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Բանկի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
 - 7.2.2. Բանկի վերակազմակերպումը,
 - 7.2.3. Բանկի լուծարումը,
 - 7.2.4. ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,
 - 7.2.5. Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը, վարձատրության չափի սահմանումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում: Բանկի խորհրդի անդամների ընտրության հարցը Բանկի արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Բանկի խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,
 - 7.2.6. հայտարարված բաժնետոմսերի ծավալի, ինչպես նաև բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացման առավելագույն չափի սահմանումը,
 - 7.2.7. խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
 - 7.2.8. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթի և վնասի բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
 - 7.2.9. օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք չկիրառելու մասին որոշման ընդունումը,
 - 7.2.10. Բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը,

- 7.2.11. օրենքով սահմանված դեպքերում Բանկի գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 (քսանհինգ) %-ից ավելին),
- 7.2.12. Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Բանկի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Բանկի կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը:
- 7.3. Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է Բանկի հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 6 (վեց) ամսվա ընթացքում:
- 7.4. Բանկի բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող բաժնետերերի ընդհանուր ժողովները, որոնք հրավիրվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար՝ համարվում են արտահերթ:
- 7.5. Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Բանկի խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, գործադիր մարմնի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 (տասը) տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:
- 7.6. Բաժնետերերն ունեն կանոնադրական հիմնադրամում իրենց բաժնետոմսերի համապատասխան ձայնի իրավունք: Բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:
- 7.7. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է, եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50 (հիսուն) %-ից ավելին տիրապետող բաժնետերեր, բացառությամբ 7.2. կետի 7.2.3. և 7.2.12 ենթակետերով նախատեսված հարցերի, որոնց դեպքում ժողովն իրավասու է, եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահի դրությամբ գրանցվել են տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 75 (յոթանասունհինգ) %-ից ավելին տիրապետող բաժնետերեր:
- 7.8. Որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ: Ընդ որում 7.2. կետի 7.2.1., 7.2.2., , 7.2.4., 7.2.6. և 7.2.11. ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ժողովին մասնակցող ձայների իրավունք սովոր բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, իսկ 7.2. կետի 7.2.3. և 7.2.12 ենթակետերով նախատեսված հարցերի շուրջ որոշումները՝ բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ով:
- 7.9. Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստումը և վարումը, դրա հեռակա կարգով անցկացումը, իրականացվում է «Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման» կարգով՝ համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի:
- 7.10. Բաժնետերերի ժողովի գումարման մասին բաժնետերերը ժողովի գումարման օրվանից առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ ծանուցվում են հետևյալ եղանակներով՝
- 7.10.1. առձեռն հանձնված նամակով,
- 7.10.2. պատվիրված նամակով,
- 7.10.3. էլեկտրոնային նամակով:
- 7.11. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի ավարտից 5 (հինգ) օրվա ընթացքում առնվազն 2 (երկու) օրինակից կազմվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրություն, որը պարունակում է ժողովում կայացած էլոյթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ժողովի ընդունված որոշումները: Բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն օրենքով վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել Բանկի գործադիր մարմնին:

8. Բանկի խորհուրդը

- 8.1. Բանկի խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և կանոնադրությամբ վերապահված են բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:
- 8.2. Բանկի խորհրդի բացառիկ իրավասություններն են՝
- 8.2.1. Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.
- 8.2.2. բաժնետերերի ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.

- 8.2.3. Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
- 8.2.4. Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
- 8.2.5. Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.
- 8.2.6. Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
- 8.2.7. շահութաբաժինների վճարման վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.
- 8.2.8. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայացումը.
- 8.2.9. Բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.
- 8.2.10. Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.
- 8.2.11. Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.
- 8.2.12. Բանկի կողմից սույն կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.
- 8.2.13. Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառնության պարտականությունների բաշխումը.
- 8.2.14. Բանկի վերակազմակերպման, դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծման, դուստր կամ կախյալ ընկերությունների մասնակցության, առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրման, առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցության, խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանման հարցերի ներկայացումը բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանը.
- 8.2.15. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.
- 8.2.16. Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
- 8.2.17. Բանկի մասնաձյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.
- 8.2.18. Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.
- 8.2.19. Լիազորում է Բանկի վարչության նախագահին՝ կնքելու աշխատանքային պայմանագրեր վարչության անդամների հետ:
- 8.2.20. օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:
- 8.3. Բանկի խորհրդի քանակական կազմը սահմանվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ոչ պակաս 5 (հինգ) և ոչ ավելի 15 (տասնհինգ) անդամներից:
- 8.4. Խորհրդի անդամներն ընտրվում են բաժնետերերի տարեկան ժողովի կամ խորհրդի անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ժողովի կողմից:
- 8.5. Բաժնետերերի ընդհանուր ժողովին Բանկի խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի բաժնետերերը, ինչպես նաև խորհուրդը:
- 8.6. Բանկի խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները, Բանկի Վարչության նախագահը, Վարչության անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:
- 8.7. Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից և չի կարող մեկ տարուց պակաս լինել:
- 8.8. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

- 8.9. Բանկի խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ խորհրդի անդամների նոր ընտրությունն իրականացվում է բաժնետերերի արտահերթ ժողովի գումարամբ: Ընտրությունը կատարվում է նույն ընթացակարգով, ինչպես և բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում:
- 8.10. Բանկի այն բաժնետերերը, որոնք բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 (տասը) և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Բանկի խորհրդի կազմում կամ նշանակել իրենց ներկայացուցչին:
- 8.11. Բանկի այն բաժնետերերը, որոնք բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 (տասը) տոկոսին, կարող են միավորվել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 (տասը) և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին խորհրդի կազմում: Նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը խորհրդում հնարավոր է միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Բանկի բաժնետերերի խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում: Պայմանագրի պատճենները տրամադրվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի բոլոր բաժնետերերին՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 (երեսուն) օր առաջ:
- 8.12. Բանկի կանոնադրական հիմնադրամում ՀՀ օրենսդրությամբ սահմանված փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերը, որոնք չեն կնքել սույն կանոնադրության 8.11 կետով սահմանված պայմանագիրը, իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Բանկի խորհրդի կազմում: Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների միասնական ներկայացուցիչը պետք է առաջադրվի նրանց կողմից և ընդգրկվի խորհրդի կազմում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն համարվում է ընդգրկված Բանկի խորհրդի կազմում որպես փոքր բաժնետերերի ներկայացուցիչ: Երկու և ավելի անձի օգտին հավասար թվով առաջարկներ ստացվելու դեպքում, Բանկի խորհրդի կազմում ընդգրկվում է այն անձը, ով առավելագույնս համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած չափանիշերին: Եթե բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկա փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի կողմից իրենց շահերը ներկայացնող ներկայացուցիչ չի առաջարկվում, խորհուրդն իրավասու է փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի շահերի պաշպանության լիազորությունը դնել խորհրդի անդամներից մեկի վրա:
- 8.13. Բանկի խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ, որոնց որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ: Բանկի խորհուրդը տարին առնվազն մեկ անգամ Բանկի խորհրդի նիստում քննարկում և անհրաժեշտության դեպքում վերանայում է Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, հեռանկարային զարգացման ծրագիրը և ներքին իրավական ակտերը:
- 8.14. Բանկի խորհուրդը, առնվազն եռամսյակը մեկ անգամ, համաձայն իր կողմից հաստատված ձևի, քննարկում է Վարչության նախագահի, ներքին աուդիտի ստորաբաժանման և գլխավոր հաշվապահի հաշվետվությունները:
- 8.15. Բանկի խորհրդի նիստերը հրավիրվում են խորհրդի նախագահի կողմից առնվազն 2 (երկու) ամիսը մեկ անգամ:
- 8.16. Բանկի խորհրդի նիստերը գումարում է Բանկի խորհրդի նախագահը՝ իր, Բանկի խորհրդի անդամի, Վարչության նախագահի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 (հինգ) կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջով:
- 8.17. Բանկի խորհրդի նիստն իրավագոր է (քվորում ունի), եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Բանկի խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է: Խորհրդի նիստերին խորհրդի անդամ չհանդիսացող անձանց մասնակցությունը կարգավորվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման կարգով:
- 8.18. Բանկի խորհրդի նիստերը կարող են անցկացվել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով), բացառությամբ սույն կանոնադրության 8.2. կետի 8.2.3., 8.2.4, 8.2.9., և 8.2.13 ենթակետերում նշված, ինչպես նաև Բանկի ռազմավարական զարգացման ծրագրի հաստատումը քննարկող նիստերի:

- 8.19. Բանկի խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել Բանկի խորհրդի հեռակա նիստերի ժամանակ: Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, վիդեոկոնֆերանս կամ այլ հաղորդակցական սարքերի, կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմով, որոնց շնորհիվ նիստին մասնակցող բոլոր անձինք ի վիճակի կլինեն լսել միմյանց, և նիստին մասնակցելը կհանդիսանա նիստին ներկայություն անձամբ, այսինքն՝ նման նիստը չի համարվի հեռակա քվեարկությամբ (հարցման) կարգով անցկացված նիստ:
- 8.20. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10 (տասը) օրյա ժամկետում:
- 8.21. Խորհրդի անդամները վարձատրվում են ամսեկան կտրվածով:
- 8.22. Առնվազն տարին մեկ անգամ Բանկի խորհուրդն իր նիստում քննարկում է արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ դեկլարացիան), ինչպես նաև քննարկում և անհրաժեշտության դեպքում վերանայում է Բանկի գործունեության ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը:
- 8.23. Առնվազն եռամսյակը մեկ անգամ Բանկի խորհուրդը քննարկում է Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, Վարչության նախագահի (Վարչության) և գլխավոր հաշվապահի հաշվետվությունները՝ Բանկի գործունեության եռամսյակային արդյունքների հետ միասին: Խորհրդի քննարկմանը ներկայացվող հաշվետվությունների ձևերն ու բովանդակությունը պետք է համապատասխանեն Բանկում ընդունված հաշվետվությունների ձևերին և բովանդակությանը:
- 8.24. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Խորհրդի նիստերի արձանագրությունները ներկայացվում են խորհրդին կից հանձնաժողովներին (առկայության դեպքում), ներքին աուդիտին, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ նրանց պահանջով: Խորհրդի կողմից ընդունված որոշումները 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում առաքվում են շահագրգիռ անձանց:
- 8.25. Խորհրդի որոշումներն ուժի մեջ են մտնում ընդունման պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումներում նշվում են գործողության մեջ մտնելու ժամկետները:
- 8.26. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Բանկի վարչության նախագահի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Բանկի վարչության նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Վարչության նախագահն ունի խորհրդակցական ձայնի իրավունք:
- 8.27. Նիստի արձանագրությունում նշվում են՝
- 8.27.1. նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
 - 8.27.2. նիստին մասնակցած անձինք,
 - 8.27.3. նիստի օրակարգը,
 - 8.27.4. քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած խորհրդի յուրաքանչյուր անդամի,
 - 8.27.5. քվեարկության դրված հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների և խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները,
 - 8.27.6. նիստում ընդունված որոշումները:
- 8.28. Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:
- 8.29. Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը, որը ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:
- 8.30. Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Բանկի խորհրդի նախագահը.

- 9.1. Բանկի խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից խորհրդի անդամների կազմից:
- 9.2. Բանկի խորհրդի նախագահը՝
- 9.2.1. կազմակերպում է խորհրդի աշխատանքները.
 - 9.2.2. գումարում և նախագահում է խորհրդի նիստերը.
 - 9.2.3. կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.
 - 9.2.4. նախագահում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովում.
 - 9.2.5. կազմակերպում է խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը:

9.3. Բանկի Խորհրդի որոշմամբ նշանակվում է Խորհրդի նախագահի տեղակալ, Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է Խորհրդի նախագահի տեղակալը:

10. Բանկի վարչությունը.

- 10.1. Բանկի Վարչությունը սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում իրականացնում է Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարում:
- 10.2. Վարչության անդամները նշանակվում են խորհրդի կողմից: Բանկի վարչության անդամների հետ աշխատանքային պայմանագիր կնքում է Բանկի վարչության նախագահը:
- 10.3. Բանկի վարչությունը կազմված է առնվազն 5 (հինգ) անդամներից:
- 10.4. Բանկի վարչությունը գործում է Բանկի կանոնադրության և Բանկի խորհրդի կողմից հաստատված վարչության կանոնակարգի հիման վրա:
- 10.5. Բանկի վարչության նախագահի տեղակալը (տեղակալները) և Բանկի գլխավոր հաշվապահը ի պաշտոնե հանդիսանում են Բանկի վարչության անդամներ:
- 10.6. Բանկի վարչության կազմում կարող են ընդգրկվել նաև Բանկի այլ աշխատակիցներ, որոնք նշանակվում են Բանկի խորհրդի կողմից՝ վարչության նախագահի ներկայացմամբ:
- 10.7. Բանկի վարչության անդամ չի կարող լինել այն անձը, որին օրենքով արգելված է լինել Բանկի ղեկավար և որը չի համապատասխանում ՀՀ Կենտրոնական Բանկի որակավորման չափանիշներին:
- 10.8. Բանկի վարչության անդամն այլ կազմակերպություններում վճարովի պաշտոններ կարող է զբաղեցնել միայն Բանկի խորհրդի համաձայնությամբ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
- 10.9. Վարչության անդամի լիազորությունները Բանկի խորհրդի կողմից կարող են դադարեցվել՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:
- 10.10. Բանկի վարչությունը
 - 10.10.1. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, մասնաճյուղերի կանոնադրությունները,
 - 10.10.2. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը,
 - 10.10.3. ապահովում է բաժնետերերի ընդհանուր ժողովի և Բանկի խորհրդի որոշումների կատարումը,
 - 10.10.4. գումարում է իր նիստերը ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը 1 (մեկ) անգամ,
 - 10.10.5. վերահսկում է օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահպանումը Բանկում,
 - 10.10.6. իր իրավասության շրջանակներում սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, միջնորդավճարների չափը,
 - 10.10.7. իր իրավասության շրջանակներում սահմանում է ակտիվային ու պասիվային գործառնությունների գծով տոկոսադրույքների քաղաքականությունը,
 - 10.10.8. քննարկում է վերստուգումների, ստուգումների նյութերը,
 - 10.10.9. հաստատում է Բանկի աշխատողների և մյուս ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների իրավունքների ու պարտականությունների մասին հրահանգները,
 - 10.10.10. քննարկում է վարչության նախագահի, վարչության անդամների և Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից վարչության քննարկմանը ներկայացված հարցեր,
 - 10.10.11. կազմակերպում է Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի մշակումը և քննարկումը,
 - 10.10.12. քննարկում է Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները, աշխատանքային գործունեության պլանները, դրանց կատարողականները,
- 10.11. վարչությունը իրավասու է լուծել ներկայացվող հարցերը, եթե նիստին ներկա են վարչության անդամների կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Հավասար ձայների դեպքում Վարչության նախագահի ձայնը համարվում է որոշիչ,
- 10.12. վարչության նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները: Վարչության նիստերը կազմակերպում և վարում է վարչության նախագահը:
- 10.13. Բանկի վարչության նիստերի գումարումը, արձանագրությունների կազմումը կարգավորվում է Բանկի խորհրդի հաստատած Բանկի վարչության կանոնակարգով:
- 10.14. Բանկի Վարչության նիստերին կարող են մասնակցել Վարչության նախագահի կողմից որոշված ստորաբաժանումների ղեկավարները՝ ըստ անհրաժեշտության և վերաբերելիության, որոնք նիստերին ունեն խորհրդակցական ձայնի իրավունք:
- 10.15. Բանկի Վարչությունն իրավասու է քննարկել և որոշում կայացնել ցանկացած հարցի վերաբերյալ, որն օրենքով կամ սույն կանոնադրությամբ սահմանված չէ որպես բաժնետերերի Ընդհանուր ժողովի և խորհրդի բացառիկ իրավասություն:

11. Բանկի վարչության նախագահը.

- 11.1. Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է Բանկի գործադիր մարմինը՝ վարչության նախագահը:
- 11.2. Վարչության նախագահը նշանակվում է խորհրդի կողմից: Բանկի վարչության նախագահի հետ աշխատանքային պայմանագիր կնքում է Բանկի խորհրդի նախագահը:
- 11.3. Բանկի վարչության նախագահը կարող է ունենալ տեղակալներ, որոնք նշանակվում են Բանկի խորհրդի կողմից՝ վարչության նախագահի ներկայացմամբ:
- 11.4. Այն հարցերը, որոնք օրենքով կամ կանոնադրությամբ չեն սահմանվել որպես բաժնետերերի ընդհանուր ժողովի, խորհրդի կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են Վարչության նախագահի իրավասությանը:
- 11.5. Բանկի վարչության նախագահը
 - 11.5.1. որպես իր բացառիկ իրավասություն ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
 - 11.5.2. Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է Բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով,
 - 11.5.3. խորհրդի կողմից հաստատված Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում հաստատում է Բանկի աշխատատեղերը (հաստիքացուցակը), ըստ հաստիքացուցակի յուրաքանչյուր աշխատողի վարձատրության չափը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,
 - 11.5.4. ներկայացնում է Բանկի շահերը,
 - 11.5.5. տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր կարգադրություններ, ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
 - 11.5.6. աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Բանկի աշխատակիցներին, կատարում աշխատակիցների տեղափոխություն (ռոտացիա), սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
 - 11.5.7. Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
 - 11.5.8. կատարում է Բանկի վարչության նախագահի տեղակալի/ների և վարչության անդամների միջև պարտականությունների բաշխում,
 - 11.5.9. լուծում է սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ հարցեր, իր իրավասության շրջանակներում իրականացնում այլ գործառույթներ,
 - 11.5.10. բացում է Բանկի թղթակցային, այդ թվում արտարժույթային և ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հաշիվներ,
 - 11.5.11. իրականացնում է օրենքներով, սույն կանոնադրությամբ, նաև խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում՝ Բանկի գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ,
- 11.6. Վարչության նախագահը պարտավոր է գործել բարեխիղճ և ողջամիտ՝ ի շահ Բանկի:
- 11.7. Վարչության նախագահը պարբերաբար, նվազագույնը եռամսյակը մեկ անգամ ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ խորհրդի սահմանած կարգով:
- 11.8. Վարչության նախագահի իրավասությանը պատկանող հարցերով որոշումները կարող են փոխանցվել միայն վարչության նախագահի ժամանակավոր փոխարինման դեպքում՝ նրան փոխարինող լիազորությունների իրավասություն ունեցող անձին:
- 11.9. Վարչության նախագահի լիազորությունները պատշաճ կարող են ժամանակավորապես փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

12. Բանկի գլխավոր հաշվապահը

- 12.1. Բանկի գլխավոր հաշվապահն իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:
- 12.2. Բանկի գլխավոր հաշվապահը նշանակվում է Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի վարչության նախագահի ներկայացմամբ:
- 12.3. Բանկի գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել բաժնետերերի ընդհանուր ժողովին, խորհրդին, գործադիր մարմնի անդամներին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:

- 12.4. Բանկի գլխավոր հաշվապահին առնվազն եռամսյակը մեկ անգամ բանկի խորհրդին և Վարչության նախագահին կամ Վարչությանն է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:
- 12.5. Բանկի գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերի և Բանկի կանոնադրությանը համապատասխան:

13. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանումը

- 13.1. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները նշանակվում են Բանկի խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:
- Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:
- 13.2. Բանկի ներքին աուդիտը Բանկի խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝
- 13.2.1. անկախ գնահատական է տալիս Բանկի ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգերի, Բանկի կառավարման համակարգի և գործընթացների որակի, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ:
- 13.2.2. եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Բանկի խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:
- 13.3. Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:
- 13.4. Ներքին աուդիտի ղեկավարը խորհրդին և վարչության նախագահին և վարչությանն է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝
- 13.4.1. հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին:
- 13.4.2. արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են վարչության նախագահին և վարչության կամ խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես խորհրդի նախագահին:
- 13.5. Սույն մասով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:
- 13.6. Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Բանկի խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

14. Բանկի արտաքին աուդիտը

- 14.1. Յուրաքանչյուր տարի Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իրականացվում է արտաքին աուդիտի կողմից: Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձն ընտրվում է մրցույթով՝ համաձայն բանկում գործող կարգի և հաստատվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:
- 14.2. Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտի կողմից կարող է իրականացվել նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 (հինգ) տոկոսի սեփականատերերի պահանջով, որոնք ընտրում են արտաքին աուդիտ իրականացնող անձին, վճարելով նրա ծառայությունների դիմաց: Ընդ որում՝ նրանք կարող են Բանկից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումը բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ արդարացված է եղել Բանկի համար: Բանկի արտաքին աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել նաև Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի միջոցների հաշվին:
- 14.3. Արտաքին աուդիտի եզրակացությունը Կենտրոնական բանկին է ներկայացվում մինչև տվյալ ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը:

15. Բանկի գործունեության դադարումը

- 15.1. Բանկի գործունեությունը դադարեցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:
- 15.2. Բանկի վերակազմավորումը (կազմակերպական-իրավական ձևի փոփոխությունը) կատարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով:
- 15.3. Բանկի լուծարումը տեղի է ունենում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հետևյալ դեպքերում՝
 - 15.3.1. լիցենզիան անվավեր ճանաչելու,
 - 15.3.2. լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու,
 - 15.3.3. «Բանկերի, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում,
 - 15.3.4. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ,
- 15.4. Բանկի լուծարային հանձնաժողովը ստեղծվում և իր աշխատանքներին իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: